# ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2025-2027

# ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ

# ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում օրենսդրությամբ սահմանվել է համայնքում իրականացվող ռազմավարական ծրագրավորման երեք փուլ, որոնք տարբերվում են միմյանցից ինչպես դրանց ծրագրավորման ժամանակային հորիզոնով, այնպես էլ յուրաքանչյուր փուլում ծրագրավորվող տարրերի ագրեգացման մակարդակով: Այսպես, կախված ծրագրավորման ժամանակային հորիզոնից՝ նախատեսվում է հնգամյա ժամանակահատվածի (երկարաժամկետ), եռամյա ժամանակահատվածի (միջնաժամկետ) և մեկ տարվա ժամանակահատվածի (կարճաժամկետ) ծրագրերի մշակում: Վերը նշված ծրագրավորման երեք փուլերը փոխկապակցված են, և յուրաքանչյուր փուլում կազմված և սահմանված կարգով հաստատված ծրագիրը հիմք է հանդիսանում հաջորդ փուլում կազմվելիք ծրագրի համար: Մասնավորապես, երկարաժամկետ ծրագիրը հիմք է հանդիսանում միջնաժամկետ ծրագրի մշակման համար, իսկ միջնաժամկետ ծրագիրը իր հերթին հիմք է հանդիսանում կարճաժամկետ ծրագրի մշակման համար:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի դրույթների իրագործման հիմնական գործիքը, որը հնարավորություն է տալու առավել իրատեսական, առարկայական դարձնել համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը՝ առաջիկա երեք տարվա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է (ՄԺԾԾ): Այն հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝ հնարավորություն ընձեռնելով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար: Այսինքն՝ համայնքի տարեկան բյուջեի նախագծի կազմման գործընթացն առաջնորդվելու է արդեն իսկ կազմված համայնքի ՄԺԾԾ-ով՝ առաջիկա տարվա համար հաստատված հաշվարկներով և հիմնավորումներով: Եվ հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ համայնքի ՄԺԾԾ նախագծի մշակումը նույնպես, ինչպես և տարեկան բյուջեի նախագծի մշակումը, համայնքի բյուջետային գործընթացի լիիրավ փուլ է համարվում:

Մասիս համայնքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) լինելով համայնքի եկամուտների ձևավորման ու ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագրերի ուղենիշային փաստաթուղթ, հանդիսանում է Մասիս համայնքի զարգացման հեռանկարի թվային արտացոլումը և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը և հանդիսանում է ելակետ՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծրագրերի ու միջոցառումների համապարփակ թվարկումն է 2025-2027 ֆինանսական տարիների համար ՏԻՄ-ի գործունեության յուրաքանչյուր բնագավառում, որը միտված է համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև հնարավորություն է ընձեռնելու համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները:

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրն ընդունելու արդյունքում ակնկալվում է եկամուտների և ծախսերի արդյունավետ կառավարում, ոլորտային տարբեր ծրագրերի իրականացմամբ պլանավորված մոտեցում, ուղղակի և ելքային արդյունքների ձեռքբերում՝ միաժամանակ կիրառելով նոր որակի և մակարդակի կառավարում:

Մասիս համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նախագծվել է՝ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով:

## Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները

Մասիս համայնքի 2025-2027թթ. համար նախանշված ծրագրերի իրականացումը հիմնվելու է համաչափ և կայուն զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետվողականությունը:
2. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:

3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:
5. Աղբահանության կազմակերպման և կարգավորման բարելավումը, համայնքի տարածքում գործող աղբավայրի գործունեության դադարեցումը:
6. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
7. Համայնքային ենթակայության առողջապահական հիմնարկների սպասարկման որակի բարելավման մեխանիզմների ներդրումը, ինչպես նաև դրանց հիմնանորոգումը և ժամանակակից ստանդարտներին հասցնելը:
8. Նախադպրոցական հաստատությունների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը:
9. Նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպությունների կառուցումն ու հիմնանորոգումը:
10. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակութային կենտրոնների հիմնանորոգումը, մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովումը:
11. Շենքերի և բակային տարածքների բարեկարգումն ու բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովումը:
12. Բնակելի ֆոնդի վերանորոգումն և պահպանումը:
13. Հանգստի գոտիների ստեղծումը, կանաչապատման աշխատանքների իրականացումը, կանաչապատ տարածքների ստեղծումը:
14. Նոր կառուցվող թաղամասերում ենթակառուցվածքների ստեղծումը:
15. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:
16. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը:
17. Երեխաների իրավունքների պաշտպանությունն ու անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը:

18. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

Թվարկված ծրագրերը վերջնական չեն, յուրաքանչյուր տարի, ելնելով ֆինանսական հնարավորություններից ու նախորդ տարվա ծրագրերի ավարտական աստիճանից, դրանք ենթարկվում են փոփոխության, ինչպես նաև առաջանում են նոր առաջնահերթություններ:

## Մասիս համայնքի 2025-2027 թվականների կանխատեսվող եկամուտները

Մասիս համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծրագրով եկամուտները կանխատեսվել են՝

**2025 թվականի համար՝**

*Եկամուտներ* *7 309 598,5 հազար դրամ*

*ծախսեր՝* *7 309 598,5 հազար դրամ*

**2026 թվականի համար՝**

*եկամուտներ՝* *7 423 736,4 հազար դրամ*

*ծախսեր՝* *7 423 736,4 հազար դրամ*

**2027 թվականի համար՝**

*եկամուտներ՝* *7 533 526,4 հազար դրամ*

*ծախսեր՝* *7 533 526,4 հազար դրամ*

### Եկամուտների կանխատեսում

Մասիս համայնքի 2025-2027 թվականների եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 7 309 598,5 հազար դրամ, 7 423 736,4 հազար դրամ և 7 533 526,4 հազար դրամ:

Հատկանշանական է, որ ընդամենը եկամուտների կազմում աճ է նախատեսվում գրեթե բոլոր բյուջետային բաժիններում և խմբերում, մասնավորապես հարկ է նկատել Մասիս համայնքի սեփական եկամուտների դինամիկան, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ

Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառմամբ, որի արդյունքում միջնաժամկետ կտրվածքով սեփական եկամուտների կազմում հիմնական աճը նախատեսվում է հարկ անշարժ գույքի մասով եկամտատեսակից:

Ծրագրով նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում: Մասնավորապես.

1. **1) Հարկեր և տուրքեր.**

Հարկային եկամուտները 2025 թվականի համար կանխատեսվել են 1 628 329,5 հազար դրամի չափով կամ 2024 թվականի համար հաստատված ցուցանիշից 333 796,7 հազար դրամով ավելի, 2026 թվականի համար՝ 1 755 626,0 հազար դրամ կամ 10.7 %-ով ավելի 2025 թվականի նկատմամբ , 2027 թվականին՝ 1 837 188,0 հազար դրամ կամ 10,4 %-ով ավելի 2026 թվականի նկատմամբ:

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով 2025 թվականին նախատեսվում է հավաքագրել 1 012 061,8 հազար դրամ, որը 2024 թվականի հաստատված ցուցանիշի նկատմամբ աճել է 285 210,414 հազար դրամով, 2026 թվականին 2025 թվականի նկատմամբ ավել է նախատեսված 37 938,2 հազար դրամով, 2027 թվականին 2026 թվականի նկատմամբ ավել է նախատեսվել 50 000,0 հազար դրամով:

Տեղական տուրքերի գծով 2025 թվականին նախատեսվել են 124 319,6 հազար դրամի մուտքեր, 2024 թվականին նախատեսված 88 504,4 հազար դրամի դիմաց կամ 35 815,2 հազար դրամով ավելի, 2026 թվականին նախատեսվել է 124 785,0 հազար դրամ, 2027 թվականին նախատեսվել է 125 847,0 հազար դրամ:

Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը 2025-2027 թվականների համար կանխատեսվել է համապատասխանաբար՝ 21 000,0 հազար դրամ, 21 500,0 հազար դրամ, 22 000,0 հազար դրամ, որից՝

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 5 000,0 հազար դրամ, 5 500,0 հազար դրամ, 6 000,0 հազար դրամ.
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ

կապված համապատասխան գործարքներից՝ 16 000,0 հազար դրամ, 16 000,0 հազար դրամ, 16 000,0 հազար դրամ:

1. **2) Պաշտոնական դրամաշնորհներ.**

Հիմք ընդունելով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ 2025-2027 թվականներին ծրագրվել են տարեկան 3 677 200,7 հազար դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ, որը 2024 թվականի հաստատված բյուջեից ավել է 568 660,6 հազար դրամ: Ընդ որում.

- ՀՀ պետական բյուջեից 2025-2027 թվականների համար ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախատեսվել է 3 643 790,3 հազար դրամ:
- Պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) գծով նախատեսվել է 33 410,4 հազ. դրամ՝ երաժշտական դպրոցների ազգային, լարային նվագարանների ուսուցման, ինչպես նաև սոցիալական որոշ խմբերի երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելուն ուղղված ծախսերի փոխհատուցման նպատակով:

1. **3) Այլ եկամուտներ.**

Այլ եկամուտները 2025 թվականին ծրագրվել են 504 068,245 հազար դրամ՝ 2024 թվականի բյուջեով նախատեսված 510211.3 հազար դրամի դիմաց կամ 6 143,055 հազար դրամով ավելի: Ընդ որում.

- Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և գույքի վարձակալությունից ակնկալվող եկամուտները 2025 թվականի համար նախատեսվել է 40 129,7 հազար դրամ: Նախատեսված ցուցանիշը կպահպանվի նաև 2026-2027 թվականների համար:
- Տեղական վճարների գծով 2025 թվականին նախատեսվել է 446 940,6 հազար դրամ՝ 2024 թվականի 386 508,6 հազար դրամի համեմատ՝ 60 432,0 հազար դրամով ավելի:
- Տեղական վճարների գծով նախատեսված ցուցանիշը ներառում է նաև աղբահանության վճարը, որը ծրագրվել է 201 442,0 հազար դրամի չափով 2024 թվականի նույն ցուցանիշից 33 392,0 հազար դրամով կամ 16.6 %-ով ավելի, գրեթե նույն չափով աճ է նախատեսվել 2026 թվականին 2025 թվականի նկատմամբ և 2027 թվականին 2026 թվականի նկատմամբ:

- Համայնքի կողմից մրցույթների և աճուրդների կազմակերպման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարների գծով ծրագրվել է 3 000,0 հազար դրամի մուտքեր:
- Համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար նախատեսվել է՝ 154 920,0 հազար դրամ, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական և նկարչական ) ծառայություններից օգտվողների համար՝ 19 478,6 հազար դրամ ծառայության վճար:
- Անասնաբույժի ծառայության դիմաց վճար՝ 600,0 հազ. դրամ:
- Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարների գծով ծրագրվել է 45 000,0 հազար դրամ:
- Այլ տեղական վճարներ՝ 2 800,0 հազար դրամ:
- Վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով նախատեսվել է 5 000,0 հազար դրամ:
- Բնակչության հատուկ սպասարկումից մուտքերը կանխատեսվել է 8 000,0 հազար դրամ:
- Նախատեսվում է նաև բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացումներ ֆոնդային բյուջե 2025 թվականին 900 000,0 հազար դրամ կամ վարչական բյուջեի եկամուտների 15,5 %-ի չափով, 2026 թվականին 900 000,0 հազար դրամ կամ վարչական բյուջեի եկամուտների 15,2 %-ի չափով և 2027 թվականին 900 000,0 հազար դրամ կամ վարչական բյուջեի եկամուտների 14,9 %-ի չափով՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով:

## Հարկաբյուջետային ռիսկեր.

ՄԺԾԾ-ի հիմքում դրված հարկաբյուջետային կանխատեսումները հիմնված են մի շարք ենթադրությունների և դատողությունների վրա, որոնց համար օգտագործվել է 2024-ի մայիսի վերջի դրությամբ առկա և հասանելի ամբողջ տեղեկատվությունը: Ինչպես ցանկացած կանխատեսում, դրանք պարունակում են

ռիսկեր՝ կապված այն հանգամանքով, որ փաստացի իրադարձությունները կարող են տարբերվել սպասումներից: 2025-2027թթ. ՄԺԾԾ փաստաթղթում ներկայացվող ռիսկերը հիմնականում վերաբերում են համաշխարհային տնտեսական անկման կամ ճգնաժամի առաջացման հավանականությանը, աշխարհաքաղաքական իրավիճակով, այդ թվում տարածաշրջանային ռազմական հակամարտությունների առկայությամբ, ինչպես նաև լրացուցիչ ծախսեր առաջանալու անհրաժեշտության կամ հարկային եկամուտների հավաքագրման սպասվածից ցածր լինելու հետևանքներով ֆինանսավորման կարիքի առաջացմանը:

Կառավարության, մասնավորապես ՀՀ ՖՆ կողմից սցենարային վերլուծության միջոցով նշված ռիսկերին տրվել է քանակական արտահայտություն, և դրանց կառավարման համար ձեռնարկվել են համարժեք միջոցառումներ՝ «անվտանգության բարձիկների» ստեղծման տեսքով: Այդ «բարձիկները» վերաբերում են բյուջեի ծախսերում պահուստային ֆոնդի նախատեսմանը: Մասնավորապես, բյուջեի ընթացիկ ծախսերում 2025-2027թթ. նախատեսվել է պահուստային ֆոնդ ընդհանուր եկամուտների 15,7 %-ի չափով, որը կարող է օգտագործվել հարկային եկամուտների՝ սպասվածից ցածր լինելու պարագայում այդ չափով ծախսերի կրճատման համար:

## Ծախսերի կանխատեսում.

Մասիս համայնքի 2025-2027 թվականների ծախսերը ծրագրվել են 2025 թվականին՝ 7 309 598,5 հազար դրամի չափով, 2026 թվականին՝ 7 423 736,4 հազար դրամի չափով և 2027 թվականին 7 533 526,4 հազար դրամի չափով:

2025 թվականի ծախսերի ամբողջ ծավալի 79,4 %-ը կամ 5 809 598,5 հազար դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (ներառված չէ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից

կապիտալ ծախսերին հատկացումները), 20,6 %-ը կամ 1 500 000,0 հազար դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին (ֆոնդային բյուջե),

Մասիս համայնքի 2025-2027 թվականի ծախսերի ծրագրում կապիտալ ելքերից են հանդիսանում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մասով 915 851,0 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 4,7 %-ը: Համայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների 3 տարիների ծախսը ծրագրվում է 1 100 000,0 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 5,6 %-ը, բնակարանային շինարարության ոլորտում նախատեսված է 110 000,0 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 0,6 %-ը, ջրամատակարարման համար առաջիկա 3 տարիներին նախատեսված է 90 000,0 դրամ կամ ընդհանուր ծրագրի 0,5 %-ը, հանգստի և սպորտի ծառայությունների համար նախատեսված է 54 631,0 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 0,3 %-ը, համայնքում հասարակական շենքերի կառուցման և կապիտալ նորոգման համար նախատեսված է 200 000,0 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 1,0 %-ը: Համայնքի ենթակայության տակ գտնվող նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգման և կառուցման համար նախատեսվում է 2 000 000,0 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 10,2 %-ը, արտադպրոցական դաստիարակության ոլորտին՝ 19 000,0 հազար դրամ կամ ընդհանուր ծրագրի 0.5 %-ը:

Ծրագրով նախատեսվել է պահուստային ֆոնդ 2025 թվականի համար 1 150 000,0 հազար դրամի չափով, որից հատկացումը ֆոնդային բյուջե կազմում է 900 000.0 հազար դրամ, հատկացման նույն չափը կպահպանվի նաև 2025, 2026 թվականներին:

1. **Օրենսդիր և գործադիր մարմինների պահպանում** ծրագրով ծախսերը ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով նախորդ և ընթացիկ տարվա ծախսերը: Այս ծրագրով նախագծում 2025 թվականին ծախսեր են նախատեսվել 1 139 008,0 հազար դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 15,6 %–ը: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում էական տեսակարար կշիռ է կազմում ***աշխատավարձի ֆոնդը***՝ 745 528,0 հազար դրամ: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը իրականացվել է Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 15-ի N 308-Ա և 2024 թվականի հունիսի 10-ի 169-Ա որոշումներով հաստատված հաստիքացուցակի հիման վրա: ***Պարգևատրման ֆոնդը*** նախատեսվել է 220 695,0 հազար դրամ: ***Էներգետիկ ծառայությունները*** ներառում են էլեկտրոէներգիայի և ջեռուցման ծախսերը, որոնք հաշվարկվել են հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի ծախսերի ծավալների միջին ցուցանիշները, մասնավորապես, այս հոդվածով 2025 թվականին նախատեսվել է 51 000,0 հազար դրամ:

***Կոմունալ ծառայությունները*** ներառում են ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի միջատազերծման հետ կապված ծախսերը և ծրագրվել են 8 000,0 հազար դրամի չափով: ***Կապի ծառայությունները*** ներառում են քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և փոստային ծառայությունները: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այս հոդվածը ներառող բոլոր ծառայությունների համար ընդհանուր նախատեսվել է 9 676,0 հազար դրամ: ***Ապահովագրական ծախսերը*** նախատեսվել են 2 500,0 հազար դրամի չափով՝ հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջները, սահմանված գները և Մասիսի համայնքապետարանում հաշվառված մեքենաների քանակը: ***Ներքին գործուղումների գծով*** ծախսերի համար նախատեսվել է 500,0 հազար դրամ, իսկ ***Արտասահմանյան գործուղումների*** գծով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 235-Ն որոշմամբ սահմանված նորմերը, ընթացիկ տարվա փաստացի ծախսերը, 2024 թվականին ծրագրված քանակական ցուցանիշները, նախատեսվել է 3 000,0 հազար դրամ հաշվի առնելով կանխատեսվող գործուղումների քանակը: ***Համակարգչային ծառայությունների*** գծով ծրագրվել է 2 160,0 հազար դրամ՝ համակարգչային կառավարման տեղեկատվական համակարգչի սպասարկման, ինտերնետային կայք էջի սպասարկման և հաշապահական հաշվառման ծրագրի սպասարկման համար: ***Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների*** համար նախատեսվել է 1000,0 հազար դրամ: Թերթերի և ամսագրերի ձեռքբերման համար՝ 250,0 հազար դրամ: ***Ներկայացուցչական ծախսերի*** գծով ծրագրվել է 1 500,0 հազար դրամ: ***Ընդհանուր բնույթի ծառայությունների*** գծով նախատեսվել է 8 300,0 հազար դրամ՝ քաղաքապետարանի աշխատակազմում փաստաթղթերի արխիվացման, կարման և կազմման, ինչպես նաև համակարգչային, հեռախոսային և կոնֆերենց համակարգերի սպասարկման ծառայությունների համար: ***Մասնագիտական ծառայությունների*** գծով նախատեսվել է 1 400,0 հազար դրամի չափով ծախս՝ հիմնականում համայնքապետարանի և վարչական նստավայրերի ջեռուցման համակարգերի հակահրդեհային ծառայության և գազասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայության համար: ***Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման*** գծով ծրագրվել է 8 000,0 հազար դրամ՝ համայնքապետարանի և վարչական նսավայրերի վարչական շենքերի ընթացիկ նորոգման համար: ***Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման*** գծով ծրագրվել է 22 000,0 հազար դրամ՝ որը ներառում է համայնքապետարանի ավտոմեքենաների, գույքի, համակարգչային

տեխնիկայի և այլ սարքավորումների ընթացիկ նորոգումը և պահպանումը: ***Գրասենյակային նյութեր և հագուստ*** հոդվածով ծախսերը ծրագրվել են 11 199,0 հազար դրամ, որը նախատեսվել է հաշվի առնելով գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը: ***Տրանսպորտային նյութերը*** ծրագրվել են 26 000,0 հազար դրամի չափով, որը նախատեսված է համայնքին պատկանող շահագործվող ավտոմեքենաների, ինչպես նաև որոշ բաժինների առանձնահատկություններով պայմանավորված աշխատակիցների անձնական ավտոմեքենաների ծառայողական նպատակներով օգտագործմանը հատկացվող վառելիքի համար: ***Կենցաղային և հանրային սննդի ծառայությունների*** գծով նախատեսվել է 4 000,0 հազար դրամ, որը հիմնականում նախատեսվում է տնտեսական ապրանքների ձեռք բերման նպատակով: ***Հատուկ նպատակային այլ նյութերի*** գծով ծրագրվել է 3 500,0 հազար դրամ: ***Այլ նպաստներ բյուջեից*** հոդվածով նախատեսվել է 8 000,0 հազար դրամ, որպես դրամական փոխհատուցում Մասիս համայնքի ավագանու անդամներին: ***Պարտադիր վճարների*** գծով՝ Համայնքի հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների տեխնիկական զննման ծախսերի և տուրքերի վճարման համար ծրագրվել է 800,0 հազ դրամ:

2. **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով ծրագրվել է 4 977,0 հազար դրամ ՔԿԱԳ-ի պահպանման ծախս, որի համար պետական բյուջեից որպես պատվիրակված լիազորության ծառայության իրականացման համար ծախսերի փոխհատուցում՝ հատկացումները կազմում է 3 998,0 հազար դրամ:

3. **Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ** ծրագրով նախատեսվել է 6 924,0 հազար դրամ համայնքների եկամուտների կառավարման էլեկտրոնային համակարգի տեխնիկական սպասարկման համար:

4. **Ընդհանուր բնույթի հանրային ծառությունների** ծրագրով նախատեսվել է 1 501 229,7 հազար դրամ, որը նախատեսված է համայնքի բոլոր բնակավայրերում տեղադրված տեսախցիկների անխափան աշխատանքն ապահովելու համար ինտերնետ կապի ծառայության համար 2 352,0 հազար դրամ, քաղաքացիների սպասարկման գրասենյակի հերթագրման սարքի ծրագրային ծպասարկման համար՝ 504,0 հազար դրամ, լրատվական ծառայությունների ձեռք բերման համար՝ 3 800,0 հազար դրամ, ամանորյա տոնական լուսավորման համար՝ 10 000,0 հազար դրամ, քաղաքի գլխավոր տոնածառի մոնտաժման և ապամոնտաժման համար՝ 1 000,0 հազար դրամ, տրանսպորտային ծառայությունների համար՝ 16 000,0 հազար դրամ, ուսանողներին

տեղափոխող տրանսպորտային ծառայության համար 60 000,0 հազար դրամ, համայնքում առկա տեսադիտման սարքերի կարգաբերման ծառայության սպասարկման համար՝ 6 000,0 հազար դրամ, նոտարական ծախսերի համար՝ 2 000,0 հազար դրամ, պահնորդական ծառայության համար՝ 4 278,0 հազար դրամ: Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի քարտեզագրման, չափագրման ծառայությունների համար՝ 20 000,0 հազար դրամ, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գնահատման համար՝ 500,0 հազար դրամ, քաղաքի թարմացված քարտեզի ձեռք բերման համար՝ 500,0 հազար դրամ, համայնքային սեփականության շենքերի, շինությունների սեյսմիկ հետազոտության համար՝ 500,0 հազար դրամ: Համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային ենթակայության շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման համար՝ 60 000,0 հազար դրամ, զորակոչի և զորահավաքի ժամանակ համայնքի կողմից զորակոչիկներին առաջնային անհրաժեշտության պարագաների տրամադրման համար 14 000,0 հազար դրամ, տոնական և հիշատակի օրերի և այլ դեպքերի համար նախատեսվել է ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերմանը՝ 2 000,0 հազար դրամ, համայնքում ամանորյա տոնական լուսավորման համար նախատեսվել է 30 000,0 հազար դրամ, դրոշների ձեռք բերման համար՝ 2 000,0 հազար դրամ: ,,Մասիսի կոմունալ տնտեսություն և բնակչության հատուկ սպասարկում,, ՀՈԱԿ-ին գերեզմանների սպասարկման և համայնքային շենքերի կառույցների ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացման համար նախատեսված է հատկացնել սուբսիդիա 115 000,0 հազար դրամի չափով, Հայաստանի համայնքների միավորմանը անդամավճար՝ 920,0 հազար դրամ, այլ հարկեր՝ 100,0 հազար դրամ, պարտադիր վճարներին՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի իրավունքի գրանցման և դատական հայցադիմումների համար 8 500,0 հազար դրամ, վարչական սարքավորումների ձեռք բերման համար՝ 383 000,0 հազար դրամ, այլ սարք սարքավորումների ձեռք բերման համար՝ 18 000,0 հազար դրամ :

5. **<u>Գյուղատնտեսության ոլորտում</u>** անասնաբույժներին աշխատավարձ՝ 19 200,0 հազար դրամ, արտեզյան հորերի պոմպերի էներգետիկ ծախսերի համար՝ 18 000,0 հազար դրամ, հակակարկտային կայանի սպասարկման համար՝ 2 000,0 հազար դրամ, ագրոքիմիական քարտեզագրման աշխատանքների համար՝ 300,0 հազար դրամ

6. **Ճանապարհների վերանորոգում, բարեկարգում և պահպանում** ծրագրերով 2025 թվականին նախատեսվել է 330 000,0 հազար դրամ:

7. **Աղբահանություն և սանիտարական մաքրում** ծրագրին 2025 թվականին նախատեսվել է 438 717,6 հազար դրամ՝ աղբահանության վճարների հավաքագրումն իրականացնող պայմանագրային աշխատողների աշխատավարձի և Մասիս համայնքի աղբահանության, չնախատեսված վայրերից աղբի հեռացման և սանիտարական մաքրման համար, ինչպես նաև աղբահանության վճարների հաշվառման և հավաքագրման ծրագրի սպասարկման համար:

8. **Շրջակա միջավայրի պաշտպանություն** ծրագրով 2025 թվականին նախատեսվել է 56 642,2 հազար դրամ համայնքի կանաչապատ տարածքների խնամքի և համայնքում թափառող կենդանիների վնասազերծումը կազմակերպելու համար:

9. **Բնակարանային շինարարություն** ծրագրով 2025 թվականին նախատեսվել է ընդհանուր 50 000,0 հազար դրամ՝ որից տանիքների ընթացիկ նորոգման համար՝ 10 000,0 հազար դրամ, նկուղների ջրագծերի և կոյուղագծերի ընթացիկ նորոգման համար՝ 10 000,0 հազար դրամ և բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգման համար՝ 30 000,0 հազար դրամ:

10. **Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ** ծրագրով 2025 թվականին նախատեսվել է 180 000,0 հազար դրամ արտաքին լուսավորության ցանցի պահպանման և ընդլայնման համար, որից էներգետիկ ծախսերի համար՝ 150 000,0 հազար դրամ, ցանցի պասարկման պահպանման համար 30 000,0 հազար դրամ:

11. **Առողջապահություն** ծրագրով 2025 թվականին նախատեսվել է 2 000,0 հազար դրամ համայնքում գործող բուժամբուլատորիաներին աջակցություն տրամադրելու համար:

12. **Սպորտային միջոցառումների կազմակերպում** ծրագրով 2025 թվականին նախատեսվել է 23 000,0 հազար դրամ, որից համայնքում առկա այգիների և խաղահրապարակների նստարանների ընթացիկ նորոգման համար 3 000,0 հազար դրամ, սպորտային միջոցառումների համար նյութերի ձեռք բերում՝ 2 500,0 հազար դրամ, սպորտի բնագավառում տարվա ընթացքում լավագույն ցուցանիշներ ձեռք բերած մարզիկներին և մարզիչներին պարգևատրելու համար 17 000,0 հազար դրամ և պատվոգրերի ձեռք բերման համար 1 000,0 հազար դրամ:

13. **Գրադարանային ծառայություններ** ծրագրով 2025 թվականին նախատեսվել է 60 420,0 հազար դրամ ,,Մասիսի քաղաքային կենտրոնական գրադարան ՀՈԱԿ,,-ին սուբսիդիա տրամադրելու համար:

14. **Մշակույթի տներ** ծրագրով 2025 թվականին Մասիս համայնքի հասարակական շենքերի կառուցման և հիմնանորոգման համար նախատեսվել է 50 000,0 հազար դրամ:

15. **Այլ մշակութային միջոցառումների կազմակերպում** ծրագրով 2025 թվականին նախատեսվել է 66 050,0 հազար դրամ, որը նախատեսվում է համայնքում միջոցառումների անցկացման համար :

16. **Կրոնական և հասարակական այլ ծառայություններ** ծրագրով 2025 թվականին նախատեսվել է 6 000,0 հազար դրամ համայնքի եկեղեցիներին նվիրատվություն տալու համար:

17. **Նախադպրոցական ուսուցում** ծրագրով 2025 թվականին նախատեսվել է 1 830 000.0 հազար դրամ՝ ,որից համայնքում գործող թվով 27 նախադպրոցական հիմնարկներ հաճախող գրեթե 2534 երեխաների պահպանման ծախսերին կհատկացվի սուբսիդիա 1 130 000,0 հազար դրամ, բյուջեից հատկացումները նախատեսվել են հաշվի առնելով երեխայի սննդի նորմատիվի պահպանումը՝ յուրաքանչյուրին օրական 450 դրամ հաշվարկով: 2025 թվականին ծրագրվում է նաև համայնքում գործող մի շարք մանկապարտեզների կառուցում և հիմնանորոգում, որի համար նախատեսվել է՝ 700 000,0 հազար դրամ:

18. **Միջնակարգ կրթության** ծրագրով 2025 թվականին նախատեսվում է 36 830,0 հազար դրամ՝ համայնքում գործող հանրակրթական դպրոցներին աջակցություն տալու նպատակով, ինչպես նաև երեխաներին դպրոց տեղափոխող ավտոբուսների վարորդներին աշխատավարձ վճարելու համար:

19. **Արտադպրոցական դաստիարակություն** ծրագրով 2025 թվականին նախատեսվել է 265 500,0 հազար դրամ: Ծրագիրը ներառում է համայնքի ենթակայության երաժշտական, սպորտի, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի և գեղարվեստի դպրոցների սուբսիդավորումը, ինչպես նաև կապիտալ ծախսերից ՄՊՍԿ ՀՈԱԿ-ի բակի բարեկարգումը:

**20.** **<u>Սոցիալական հատուկ արտոնություններ</u>** ծրագրով 2025 թվականին նախատեսվում է 72 800,0 հազար դրամ, որից սոցիալապես անապահով ընտանիքների հուղարկավորության նպաստերի համար 12 000,0 հազար դրամ, այլ նպաստների և ուսման վարձերի փոխհատուցման, Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներին դրամական աջակցության համար՝ 59 000,0 հազար դրամ, համայնքում գործող բարեգործական կազմակերպություններին նվիրատվություն՝ 1 800,0 հազար դրամ:

Ընդհանուր առմամբ 2025 թվականի համար ներկայացված ընթացիկ ծախսերը ծրագրվում է նախատեսել նաև 2026 թվականին՝ սահմանելով համամասնորեն 1,9 % ծախսերի աճ 2025 թվականի նկատմամբ և 1,9 % ծախսերի աճ 2027 թվականին 2026 թվականի նկատմամբ:

**21.** **<u>Պահուստային ֆոնդը</u>** 2025 թվականի համար նախատեսվում է 1 150 000,0 հազար դրամ, որից հատկացում ֆոնդային բյուջե 900 000,0 հազար դրամ, 2025 և 2026 թվականներին պահուստային ֆոնդը նախատեսվում է յուրաքանչյուր տարի ևս 900 000,0 հազար դրամ, որոնք կուղղվեն ֆոնդային բյուջեի կապիտալ ծախսերին:

**<u>Մասիս համայնքի 2025- 2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի եկամուտները և իրականացվող կապիտալ ծախսերը ամփոփ տեսքով</u>**.

**ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹԹ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ**

| | | Հազար դրամ | | | Ծավալը բյուջեում %-ով | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Մուտքերի անվանումը | 2025թ. կանխ | 2026թ. կանխ | 2027թ. կանխ | **2025** | **2026** | **2027** |
| 1 | **Բյուջետային մուտքեր՝ ընդամենը** | 6 409 598,50 | 6 523 646,80 | 6 632 936,80 | | | |
| | **Վարչական բյուջեի մուտքեր ընդամենը** | **5 809 598,50** | **5 923 646,80** | **6 032 936,80** | 90,64 | 90,80 | 90,95 |
| 2 | Գույքային հարկեր անշարժ գույքից | 470 948,10 | 559 341,00 | 589 341,00 | 7,3 | 8,6 | 8,9 |
| 3 | Գույքահարկ փոխադրամիջոցներից | 1 012 061,80 | 1 050 000,00 | 1 100 000,00 | 15,8 | 16,1 | 16,6 |
| 4 | Տեղական տուրքեր | 124 319,60 | 124 785,00 | 125 847,00 | 1,9 | 1,9 | 1,9 |
| 5 | Պետական տուրքեր | 21 000,00 | 21 500,00 | 22 000,00 | 0,3 | 0,3 | 0,3 |
| 6 | Այլ եկամուտներ | 504 068,30 | 490 820,10 | 518 548,10 | 7,9 | 7,5 | 7,8 |
| 7 | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | 3 677 200,70 | 3 677 200,70 | 3 677 200,70 | 57,4 | 56,4 | 55,4 |
| | **Ֆոնդային բյուջեի մուտքեր ընդամենը** | **1 500 000,00** | **1 500 000,00** | **1 500 000,00** | | | |
| 8 | Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարումից մուտքեր | 600 000,00 | 600 000,00 | 600 000,00 | 9,4 | 9,2 | 9,0 |
| 9 | Վարչական և ֆոնդային բյուջեների տարեսկզբի մնացորդ | | | | 0,0 | 0,0 | 0,0 |
| 10 | Հատկացում վարչական բյուջեի պահուստային ֆոնդից | 900 000,00 | 900 000,00 | 900 000,00 | 14,0 | 13,8 | 13,6 |
| 11 | Կապիտալ սուբվենցիաներ | 0,00 | 0,00 | 0,00 | 0,0 | 0,0 | 0,0 |

## ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ

Հազարդրամ

| | | 2025թ. | 2026թ. | 2027թ. | Համայնքի բյուջե | Պետական բյուջե | Համաֆինանսավորում | Գործառական դասակարգում |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ** | **401 000,00** | **159 482,00** | **355 369,00** | **0,00** | **0,00** | **0,00** | |
| 1 | Վարչական սարքավորումներ. | 383 000,00 | 159 482,00 | 355 369,00 | | | | 01,6,1 |
| 2 | Այլ սարք, սարքավորումներ | 18 000,00 | | | | | | 01,6,1 |
| | **Ճանապարհային տրանսպորտ** | **300 000,00** | **400 000,00** | **400 000,00** | **715 000,00** | **385 000,00** | **0,00** | |
| 3 | Մասիս համայնքում ասֆալտապատման աշխատանքներ /սուբվենցիա/ | 300 000,00 | 400 000,00 | 400 000,00 | 715 000,00 | 385 000,00 | | 04,5,1 |
| | **Բնակարանային շինարարություն** | **30 000,00** | **40 000,00** | **40 000,00** | **0,00** | **0,00** | **0,00** | |
| 4 | Բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգման աշխատանքներ | 30 000,00 | 40 000,00 | 40 000,00 | | | | 06,1,1 |
| | **Ջրամատակարարում** | **0,00** | **40 000,00** | **50 000,00** | **0,00** | **0,00** | **0,00** | |
| 5 | Մասիս համայնքում խմելու ջրագծերի կառուցում և հիմնանորոգում | | 40 000,00 | 50 000,00 | | | | 06,3,1 |
| | **Հանգստի և սպորտի ծառայություններ** | **0,00** | **0,00** | **54 631,00** | **0,00** | **0,00** | **0,00** | |
| 6 | Մարմարաշեն բնակավայրում մինի ֆուտբոլի դաշտի կառուցում | | | 54 631,00 | | | | 08,1,1 |
| | **Մշակույթի տներ** | **50 000,00** | **50 000,00** | **100 000,00** | **0,00** | **0,00** | **0,00** | |
| 7 | Մասիս համայնքում հասարակական շենքերի կառուցում և կապիտալ նորոգում /մշակույթի տներ սուբվենցիա/ | 50 000,00 | 50 000,00 | 100 000,00 | | | | 08,2,4 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Նախադպրոցական կրթություն** | **700 000,00** | **800 000,00** | **500 000,00** | **600 000,00** | **1 400 000,00** | **0,00** | |
| 8 | Մասիս համայնքում մանկապարտեզների կառուցում և կապիտալ նորոգում/սուբվենցիա/ | 700 000,00 | 800 000,00 | 500 000,00 | 600 000,00 | 1 400 000,00 | | 09,1,1 |
| | **Արտադպրոցական դաստիարակություն** | **19 000,00** | **10 518,00** | **0,00** | **0,00** | **0,00** | **0,00** | |
| 9 | ՄՊՍԿ ՀՈԱԿ-ի բակի բարեկարգում | 19 000,00 | | | | | | |
| 10 | <<Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի պատուհանների փոխարինում | | 10 518,00 | | | | | 09,5,1 |
| | | | | | | | | |
| | Ընդամենը | **1 500 000,00** | **1 500 000,00** | **1 500 000,00** | **1 315 000,00** | **1 785 000,00** | **0,00** | **0** |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**